

Հավելված
Հայաստանի Հանրապետության
փաստաբանների պալատի խորհրդի
27.01.2017թ. թիվ 02/4-Լ որոշման

ՀՀ փաստաբանների պալատի
խորհրդի նախագահ՝
Արա Զոհրաբյան

Կ Ա Ր Գ

ԱՅԼ ՊԵՏՈՒԹՅԱՆ ՓԱՍՏԱԲԱՆԻՆ ՀԱՎԱՏԱՐՄԱԳԻՐ ՏԱԼՈՒ ԵՎ ՀԱՎԱՏԱՐՄԱԳՐԻ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆԸ ԴԱԴԱՐԵՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ (նոր խմբագրությամբ)

I. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1.1. «Այլ պետության փաստաբանին հավատարմագիր տալու և հավատարմագրի գործողությունը դադարեցնելու մասին» սույն կարգը (**այսուհետ՝ Կարգ**) սահմանում է Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատի (**այսուհետ՝ ՀՀ փաստաբանների պալատ կամ Պալատ**) անդամ չհանդիսացող, սակայն այլ պետությունում փաստաբանական գործունեություն իրականացնելու իրավունք ունեցող անձին (**այսուհետ՝ Այլ պետության փաստաբան**) Հայաստանի Հանրապետության տարածքում փաստաբանական գործունեություն իրականացնելու համար հավատարմագիր տալու և տրված հավատարմագրի գործողությունը դադարեցնելու ընթացակարգերը:

1.2. Հավատարմագիրը հանձնում է ՀՀ փաստաբանների պալատի նախագահը:

II. ՀԱՎԱՏԱՐՄԱԳԻՐ ՏԱԼՈՒ ԿԱՐԳԸ

2.1. Այլ պետության փաստաբանին հավատարմագիր տալիս է Պալատի խորհուրդը կամ Պալատի նախագահը՝ Պալատի կանոնադրության և սույն կարգի համաձայն:

2.2. Սույն կարգին համապատասխան ՀՀ տարածքում փաստաբանական գործունեություն իրականացնելու նպատակով Լեռնային Ղարաբաղի Հանրապետության (**այսուհետ՝ ԼՂՀ**) փաստաբանների պալատի հանրային պաշտպանի գրասենյակում որպես հանրային պաշտպան աշխատող փաստաբանը (**այսուհետ՝ ԼՂՀ հանրային պաշտպան**)՝ անկախ սույն կարգի 4.6 կետի 1-ին և 2-րդ ենթակետերով նախատեսված պայմաններին չբավարարելու հանգամանքից, կարող է անվճար հիմունքներով հավատարմագրվել, եթե՝

1) ԼՂՀ հանրային պաշտպանին հավատարմագիրն անհրաժեշտ է հանրային պաշտպանության շրջանակներում իր մասնագիտական

պարտականությունները կատարելու նպատակով ՀՀ տարածքում փաստաբանական գործունեություն իրականացնելու համար.

2) ներկայացվել է ԼՂՀ հանրային պաշտպան հանդիսանալու վերաբերյալ ապացույցը՝ ԼՂՀ փաստաբանների պալատի հետ ունեցած աշխատանքային պայմանագրի պատճենը՝ վավերացված ԼՂՀ փաստաբանների պալատի կողմից.

2.3. Սույն կարգի իմաստով՝

1) ԼՂՀ հանրային պաշտպան է համարվում այն փաստաբանը, ով աշխատանքային պայմանագրի հիման վրա աշխատում է ԼՂՀ փաստաբանների պալատի հանրային պաշտպանի գրասենյակում որպես հանրային պաշտպան:

2) Հանրային պաշտպանություն է համարվում ԼՂՀ հանրային պաշտպանի կողմից «Փաստաբանության մասին» ԼՂՀ օրենքով սահմանված կարգով և անձանց ԼՂՀ փաստաբանների պալատի հանրային պաշտպանի գրասենյակի ղեկավարի որոշման հիման վրա ԼՂՀ հանրային պաշտպանի կողմից տրամադրվող անվճար իրավաբանական օգնությունը:

2.4. Այլ պետության փաստաբանը կարող է հավատարմագրվել մեկ տարի ժամկետով կամ կոնկրետ գործով:

2.5. Այլ պետության փաստաբանը հավատարմագրվելու համար Պալատի նախագահին է ներկայացնում հետևյալ փաստաթղթերը՝

1) Պալատի նախագահի կողմից սահմանված ձևի դիմում,

2) Այլ պետությունում փաստաբանների կառույցի կողմից տրված արտոնագիրը՝ հայերեն թարգմանությամբ (վավերացված նոտարի կողմից).

3) հայտարարություն Պալատի կողմից հաստատված Վարքագծի կանոնագրքի հետ համաձայնվելու և իր նկատմամբ կիրառելի համարելու մասին.

4) հավատարմագրման վճարը հավաստող փաստաթուղթը (դիմումը մերժվելու դեպքում, գումարն ենթակա է վերադարձման).

5) անձնագրի պատճենը (օտար լեզվով լինելու դեպքում՝ հայերեն թարգմանությամբ, վավերացված նոտարի կողմից).

6) Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը չտիրապետելու դեպքում՝ ՀՀ փաստաբանների պալատի անդամ փաստաբանի (**այսուհետ՝ Օժանդակող փաստաբան**) գրավոր հավաստումը՝ Այլ պետության փաստաբանին գործով օժանդակություն ցույց տալու մասին.

7) սույն կարգի 2.2 կետով նախատեսված դեպքում՝ ԼՂՀ հանրային պաշտպան հանդիսանալու վերաբերյալ ապացույցը՝ ԼՂՀ փաստաբանների պալատի հետ ունեցած աշխատանքային պայմանագրի պատճենը՝ վավերացված ԼՂՀ փաստաբանների պալատի կողմից:

2.6. Առաջին անգամ հավատարմագրելու մասին դիմում ներկայացրած Այլ պետության փաստաբանին հավատարմագիր տալու հարցը որոշում է Պալատի խորհուրդը՝ դիմումը ստանալու օրվանից քսան օրվա ընթացքում: Այլ պետության փաստաբանի կողմից ներկայացված փաստաթղթերի իսկությունը ստուգելու անհրաժեշտություն ծագելու դեպքում ՀՀ փաստաբանների պալատի նախագահը հրավիրում է ՀՀ փաստաբանների պալատի խորհրդի նիստ անհրաժեշտ պատասխանները ստանալուց հետո՝ տասն օրվա ընթացքում: Այլ պետության փաստաբանի մասնակցությունը Պալատի խորհրդի նիստին պարտադիր է: Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը տիրապետելու հարցը ճշտելու համար Պալատի խորհրդի անդամները կարող են հարցեր տալ Այլ պետության

փաստաբանին (հարցերը կարող են վերաբերվել Հայաստանի Հանրապետության քաղաքացիական, քրեական կամ վարչական դատավարության օրենսգրքերի, իսկ կոնկրետ գործով հավատարմագրման դեպքում՝ նաև այդ գործի հետ կապված նյութական նորմերի դրույթներին): Հայոց լեզվին չտիրապետող Այլ պետության փաստաբանը Պալատի խորհրդի նիստին մասնակցում է իր կողմից և իր հաշվին հրավիրած թարգմանչի հետ միասին:

2.7. Երկրորդ կամ հերթական անգամ հավատարմագրելու մասին դիմում ներկայացրած Այլ պետության փաստաբանին հավատարմագիր տալու հարցը որոշում է Պալատի նախագահը՝ դիմումը ստանալու պահից յոթ օրվա ընթացքում:

2.8. Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը չտիրապետող Այլ պետության փաստաբանին տրվող հավատարմագրի մեջ նշվում է նաև՝ **ա)** Օժանդակող փաստաբանի անունը, ազգանունը, **բ)** Օժանդակող փաստաբանի արտոնագրի համարը և **գ)** հավատարմագիրն Օժանդակող փաստաբանի մասնակցության պայմաններում ուժի մեջ լինելու մասին:

2.9. Սույն կարգի 2.2 կետում նախատեսված դեպքում ԼՂՀ հանրային պաշտպանին հավատարմագիրը տրվում է միայն հանրային պաշտպանության իրականացման նպատակով, որի մասին հավատարմագրի մեջ կատարվում է համապատասխան նշում: Սույն կետում նշված հավատարմագրով հանրային պաշտպանության ոլորտից դուրս ՀՀ տարածքում փաստաբանական գործունեություն իրականացնելն արգելվում է, իսկ նման հանգամանքի բացահայտումը հիմք է հանդիսանում ԼՂՀ հանրային պաշտպանին տրված հավատարմագրի գործողությունը վաղաժամկետ դադարեցնելու համար:

2.10. ՀՀ փաստաբանների պալատի խորհուրդը մերժում է Այլ պետության փաստաբանի հավատարմագրումը, եթե՝

- 1) չեն պահպանվել Կարգի 2.5 կետի պահանջները, կամ
- 2) չեն հաստատվել ներկայացված փաստաթղթերի իսկությունը կամ հավատարմագրման համար դիմած անձը իրավունք չունի Հայաստանի Հանրապետությունում զբաղվել փաստաբանական գործունեությամբ, կամ
- 3) Օժանդակող փաստաբանի հավաստում չներկայացրած Այլ պետության փաստաբանը չի տիրապետում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, կամ
- 4) Այլ պետության փաստաբանը ՀՀ փաստաբանական դպրոցից որպես կարգապահական տույժ հեռացված է եղել և հավատարմագրման դիմումը ներկայացնելու պահին չի լրացել հեռացման պահից մեկ տարին, կամ
- 5) ԼՂՀ հանրային պաշտպանի կողմից չի ներկայացվել սույն կարգի 2.5 կետի 7-րդ ենթակետով նախատեսված փաստաթուղթը,
- 6) սույն կարգի 2.2 կետով նախատեսված կարգով հավատարմագրված անձը դադարել է ԼՂՀ հանրային պաշտպան լինել:

2.11. «Փաստաբանության մասին» ՀՀ օրենքի համաձայն՝ ՀՀ փաստաբանների պալատի նախագահը հավատարմագիր ստացած Այլ պետության փաստաբանին ընդգրկում է այլ պետության փաստաբանների ցուցակում:

2.12. Հավատարմագրված Այլ պետության փաստաբանը ՀՀ փաստաբանների պալատի անդամ չի հանդիսանում:

III. ՀԱՎԱՏԱՐՄԱԳՐՄԱՆ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆԸ ԴԱԴԱՐԵՑՆԵԼՈՒ ԿԱՐԳԸ

3.1. ՀՀ փաստաբանների պալատի խորհուրդը կարող է ուժը կորցրած ճանաչել (դադարեցնել) Այլ պետության փաստաբանի հավատարմագրի գործողությունը, եթե՝

1) Այլ պետության փաստաբանը խախտել է «Փաստաբանության մասին» ՀՀ օրենքի, ՀՀ փաստաբանների պալատի կանոնադրության կամ Փաստաբանի վարքագծի կանոնագրքի որևէ պահանջ,

2) Այլ պետության փաստաբանը կոնկրետ գործով հավատարմագրված լինելով այլ գործով դատական ներկայացուցչություն կամ պաշտպանություն է իրականացրել,

3) դադարեցվել կամ կասեցվել է Այլ պետության փաստաբանական գործունեության իրավունքն այն երկրում, որտեղ իրեն տրամադրվել էր այդ իրավունքը,

4) Օժանդակող փաստաբանը գրավոր հրաժարվել է իր հավաստումից և Այլ պետության փաստաբանը Պալատի նախագահի գրությունը ստանալուց հետո հինգ օրվա ընթացքում չի ներկայացրել այլ Օժանդակող փաստաբանի հավաստում,

5) հավատարմագրված փաստաբանը գրավոր դիմում է ներկայացրել իր հավատարմագրի գործողությունը դադարեցնելու վերաբերյալ,

6) ԼՂՀ հանրային պաշտպանը խախտել է հավատարմագրի պայմանը և նշված հավատարմագրով ՀՀ տարածքում փաստաբանական գործունեություն է իրականացրել հանրային պաշտպանության շրջանակներից դուրս գործերով:

3.2. Կոնկրետ գործով տրված հավատարմագրի գործողությունը համարվում է դադարած այդ գործով ըստ էության կայացված վերջնական ակտի ուժի մեջ մտնելու հաջորդ օրվանից:

IV. ՀԱՎԱՏԱՐՄԱԳՐՄԱՆ ՎՃԱՐԸ

4.1. Կոնկրետ գործով հավատարմագիր տալու համար վճարի չափը սահմանվում է 200.000 (երկու հարյուր հազար) ՀՀ դրամ, բացառությամբ սույն կարգի 4.6 կամ 4.7 կետերում նշված դեպքերի: Սույն կետում նշված գործով տրված հավատարմագրի մեջ նշվում է գործի համարը, իսկ դրա անհնարինության դեպքում՝ գործն անհատականացնող տվյալները:

4.2. Մեկ տարվա ժամանակահատվածով հավատարմագիր տալու համար վճարի չափը սահմանվում է 1.500.000 (մեկ միլիոն հինգ հարյուր հազար) ՀՀ դրամ, բացառությամբ սույն կարգի 4.6 կետում նշված դեպքի:

4.3. Հավատարմագրման գումարն Այլ պետության փաստաբանը վճարում է անկանխիկ՝ ՀՀ փաստաբանների պալատի հաշվին փոխանցելու միջոցով կամ կանխիկ՝ ՀՀ փաստաբանների պալատի դրամարկղում:

4.4. ՀՀ փաստաբանների պալատի խորհրդի կամ նախագահի կողմից հավատարմագրվելու համար դիմած անձին վերադարձվում է իր կողմից վճարված գումարը, եթե վերջինիս դիմումը մերժվում է:

4.5. Երկրորդ կամ հերթական անգամ հավատարմագրման համար դիմելու դեպքում, Այլ պետության փաստաբանը պարտավոր է կրկին կատարել համապատասխան վճարումը:

4.6. ԼՂՀ փաստաբանը ազատվում է Այլ պետության փաստաբանի հավատարմագրման վճարից, եթե ունի՝

1) սույն կարգի հաստատման օրվա դրությամբ Լեռնային Ղարաբաղի Հանրապետությունում փաստաբանական գործունեության առնվազն տասնութ ամսվա ստաժ, կամ

2) առնվազն հինգ տարի մշտապես բնակվել է Լեռնային Ղարաբաղի Հանրապետությունում, կամ

3) ԼՂՀ հանրային պաշտպանի կարգավիճակ և վերջինիս հավատարմագիրը տրվում է միայն հանրային պաշտպանության շրջանակներում ՀՀ տարածքում փաստաբանական գործունեություն իրականացնելու նպատակով:

4.7. Քրեական գործով մինչդատական վարույթի համար հավատարմագրման վճարը սահմանվում է 200.000 (երկու հարյուր հազար) ՀՀ դրամ՝ անկախ գործի տևողությունից, իսկ նույն գործով դատական վարույթի համար՝ 200.000 (երկու հարյուր հազար) ՀՀ դրամ՝ անկախ գործի տևողությունից և ատյաններից:

4.8. Հավատարմագրի գործողությունը վաղաժամկետ դադարեցվելու դեպքում հավատարմագրման վճարը վերադարձման ենթակա չէ:

V. ԵԶՐԱՓԱԿԻՉ ԴՐՈՒՅԹՆԵՐ

5.1. Կարգն ուժի մեջ է մտնում ՀՀ փաստաբանների պալատի խորհրդի կողմից հաստատելու օրվան հաջորդող օրվանից և գործում է անժամկետ:

5.2. Կարգում փոփոխություններ և (կամ) լրացումներ կարող են կատարվել միայն ՀՀ փաստաբանների պալատի խորհրդի կողմից:

5.3. Կարգի հետ կապված մեկնաբանությունները (պարզաբանումները) տրվում են ՀՀ փաստաբանների պալատի խորհրդի կողմից՝ վերջինիս նախաձեռնությամբ կամ շահագրգիռ անձի դիմումի հիման վրա:

* * *